ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության կողմից կազմակերպված «Մարդակենտրոն ապագային պատրաստ կազմակերպության կառուցում» թեմայով համաժողովին մասնակցելու նպատակով 2024 թվականի հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 1-ը Հունգարիա (քաղաք Բուդապեշտ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

1) Աննա Ղազարյան, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության մրցույթների, վերապատրաստման կազմակերպման և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ,

2) Քնարիկ Ղազարյան, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության մրցույթների, վերապատրաստման կազմակերպման և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Հունգարիա, ք. Բուդապեշտ, 2024թ. հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 1-ը:

3. Հրավիրող կողմը՝

Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպություն (ՀՄՆԿ, IOTA):

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության կողմից կազմակերպված «Մարդակենտրոն ապագային պատրաստ կազմակերպության կառուցում» թեմայով մարդկային ռեսուրսների կառավարման հերթական համաժողովին: Համաժողովը նվիրված էր հարկային մարմնում մարդակենտրոն, կորպորատիվ մշակույթի ձևավորման հիմնահարցին, մասնավորապես հարկային մարմնում այնպիսի սկզբունքների, արժեքների և ռազմավարական նպատակների ներդրմանը, որոնք կնպաստեն աշխատանքի արտադրողականությանը, աշխատողների մոտիվացիային, թիմային աշխատանքին՝ միաժամանակ բարձրացնելով հարկային մարմնի հեղինակությունը:

5. Քննարկված թեմաները՝

Համաժողովի շրջանակներում անցակցվել են 7 լիագումար նիստեր, որոնց ընթացքում մանրամասն քննարկվել են հետևյալ թեմաները՝

- հարկային մարմնում կորպորատիվ արժեքների և մշակույթի ձևավորում և զարգացում,
- հաջողակ գործատուի բրենդավորում, բրենդավորման ռազմավարությունների մշակում,
- նոր ընդունված աշխատակիցների ադապտացիայի և մենթորության ծրագրերի մշակում,
- կարիերայի առաջխաղացման տարբեր փուլերում աշխատակիցների փորձի և ներգրավվածության բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում,
- առաջնորդություն և փոփոխությունների կառավարում,
- արհեստական բանականության (AI) դերը և կիրառումը մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում,
- գենդերային հավասարությանն ուղղված հնարավորությունները և մարտահրավերները և այլն:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համաժողովի լիագումար նիստերի ընթացքում 13 երկրների ներկայացուցիչներ հանդես են եկել շնորհանդեսներով՝ ներկայացնելով օրակարգում ընդգրկված թեմաների վերաբերյալ իրենց հարկային մարմինների մոտեցումները և փորձը: Յուրաքանչյուր շնորհանդեսին հաջորդել են հարց ու պատասխան ձևաչափով քննարկումները:

Բացի այդ, համաժողովի շրջանակներում անցկացվել են նաև 3 թեմատիկ խմբային քննարկումներ, որոնց ընթացքում առավել հանգամանորեն քննարկվել են օրակարգում ներառված հարցերը, իրավիճակային խնդիրները և դրանց ուղղված գործնական լուծումները: Նշված խմբային քննարկումներին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության ներկայացուցիչները ներկայացրել են նաև 2022 թվականից մեկնարկած օրենսդրական փոփոխությունների և հարկային վարչարարության բարեփոխումների ռազմավարության փոփոխության շրջանակներում հարկային ծառայողների ընդունելության, համալրման, վերապատրաստման, առաջխաղացման, գնահատման, կատարված աշխատանքի դիմաց արժանավայել վարձատրության նոր համակարգերի ներդրմանն ուղղված ՀՀ պետական եկամուտների կոմիտեի փորձը և առանձնահատկությունները, որոնք մեծ հետաքրքրություն են առաջացրել մասնակիցների շրջանում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Կարևորելով Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության հետ շարունակական համագործակցությունը՝ համաժողովի ընթացքում ձեռք է բերվել բանավոր

պայմանավորվածություն՝ կազմակերպելու աշխատանքային քննարկումներ նաև առցանց ձևաչափով, ինչպես նաև օգտվելու հարկային մարմինների համար նախատեսված վիրտուալ կրթական հարթակում (VITARA) առկա մասնագիտական ուսուցման դասընթացներից:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Մարդկային ռեսուրսների կառավարման հերթական համաժողովի օրակարգը ձևավորելու, ինչպես նաև աշխատանքային քննարկումներ կազմակերպելու նպատակով մասնակիցներին առաջարկվել է այս համաժողովի վերաբերյալ հարցման շրջանակում ներկայացնել նաև հետագա քննարկումների համար նախընտրելի թեմաները:

Համաժողովին մասնակցությունը հնարավորություն ընձեռեց ՀՀ պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության ներկայացուցիչներին ծանոթանալու առաջատար հարկային մարմինների անձնակազմի համալրման, կարողությունների շարունակական զարգացման և կառավարման, կորպորատիվ արժեքների և մշակույթի ձևավորման փորձին, ինչպես նաև մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտի զարգացման ժամանակակից միտումներին: Համաժողովի շրջանակներում Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության անդամ պետությունների հետ փորձի փոխանակումը և միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունը կնպաստի մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գործառույթների արդյունավետության բարձրացմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Աննա Ղազարյան

Քնարիկ Ղազարյան

06.11.2024թ.